ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/9/2026

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **20 փետրվարի 2026թ.**

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը, կազմով՝ Մարիամ Գալստյանի (նիստը նախագահող), Արամայիս Փաշինյանի և Արմեն Մարուխյանի (այսուհետ՝ Հանձնաժողով), 2026 թվականի փետրվարի 20-ին քննելով «Ժառանգություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Աշոտ Ռիչարդի Սաժումյանի կողմից Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը (այսուհետ՝ նաև Հայտարարագիր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/9/2026 գործը՝

Պ Ա Ր Զ Ե Ց

I.Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը

1.1 Հանձնաժողովը, «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով վերապահված գործառույթների շրջանակում, «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով (այսուհետ՝ նաև Սահմանադրական օրենք) սահմանված հայտարարագրերը, մասնավորապես՝ Կուսակցության մշտապես գործող

ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը Օրենքով սահմանված ժամկետում ներկայացված լինելու փաստի ստուգման արդյունքում պարզել է, որ «Ժառանգություն» կուսակցության (այսուհետ՝ նաև Կուսակցություն) մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Աշոտ Սաժումյանի Հայտարարագիրը ներկայացված չէ Հանձնաժողով:

1.2 Հանձնաժողովի կողմից 2025 թվականի նոյեմբերի 07-ին և նոյեմբերի 13-ին թիվ 01/4293/35-2025 գրությունը «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անհատական ծանուցման ընթացակարգով՝ էլեկտրոնային փոստով, ուղարկվել է Աշոտ Սաժումյանին՝ տեղեկացնելով Հայտարարագիրը ներկայացնելու պարտականության վերաբերյալ, միաժամանակ առաջարկվել է ծանուցումը ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, լրացնել և ներկայացնել համապատասխան հայտարարագիրը: Աշոտ Սաժումյանը ծանուցվել է նաև, որ հայտարարագիրը 30 օրվա ընթացքում չներկայացնելու դեպքում, անհրաժեշտ է ծանուցումը ստանալուց հետո՝ 31-րդ օրը՝ ժամը 09:00-ին, ներկայանալ Հանձնաժողով մասնակցելու վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմելուն:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնգօրյա ժամկետում Հանձնաժողովը չի ստացել էլեկտրոնային փոստով ուղարկված ծանուցումը Աշոտ Սաժումյանի կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստում, և վերջինս հիշյալ ժամկետում չի լրացրել Հայտարարագիրը՝ ծանուցումը 2025 թվականի նոյեմբերի 25-ին փոստային կապի միջոցով՝ պատվիրված նամակով, ուղարկվել է Աշոտ Սաժումյանի՝ բնակչության պետական ռեգիստրում հաշվառված հասցեով և 2025 թվականի նոյեմբերի 28-ին ստորագրությամբ հանձնվել է Աշոտ Սաժումյանին (հիմք՝ [redacted] հետադարձ ծանուցման առաքանին): Սակայն, պատշաճ ծանուցվելուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Աշոտ Սաժումյանը համապատասխան հայտարարագիրը չի ներկայացրել:

1.3 2025 թվականի դեկտեմբերի 29-ին պատշաճ ծանուցված Աշոտ Սաժումյանի բացակայությամբ կազմվել է թիվ ՎԻՎ 520/25 արձանագրությունը՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված իրավախախտման հատկանիշներով:

1.4 Հանձնաժողովի կողմից 2026 թվականի հունվարի 05-ին թիվ 01/4-2-2026 գրությամբ Աշոտ Սաժումյանին ծանուցում է ուղարկվել 2026 թվականի հունվարի 26-ին՝ ժամը 14:55-ին, վերոնշյալ առերևույթ իրավախախտման հիմքով կազմված արձանագրության և վերաբերելի նյութերի հիման վրա իրականացվելիք գործի քննությանը մասնակցելու համար, իսկ ներկայանալու անհնարինության դեպքում ծանուցումը ստանալուց հետո այդ մասին տեղեկացնել գրավոր՝ նամակ ուղարկելով info@cpcarmenia.am էլեկտրոնային փոստի հասցեին:

1.5 2026 թվականի հունվարի 23-ի Հանձնաժողովը ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 47-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով որոշում է կայացրել վարչական վարույթի ժամկետը երկարաձգելու մասին և փոխօգնության կարգով դիմել է ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն՝ Աշոտ Սաժումյանի՝ «Ժառանգություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ հանդիսանալու և էլեկտրոնային ռեսգիստրում առկա տվյալների ամբողջականության հանգամանքը պարզելու նպատակով: Միևնույն ժամանակ, թիվ 01/226-2026 գրությամբ Աշոտ Սաժումյանը ծանուցվել է, որ վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննության օր է նշանակվել 2026 թվականի փետրվարի 20-ին՝ ժամը 11:30-ն:

1.6 Հաշվի առնելով այն, որ ծանուցումը պատվիրված նամակով ուղարկվել է Աշոտ Սաժումյանին, սակայն ուղարկվելու օրվանից հետո՝ երկշաբաթյա ժամկետում, Հանձնաժողովը չի ստացել այն ստանալու մասին հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 29.1-ին հոդվածի 15-րդ մասը՝ ծանուցումը 2026 թվականի փետրվարի 11-ին տեղադրվել է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային www.azdarar.am կայքում, որից հետո՝ հինգերորդ օրը, ծանուցումը համարվել է հանձնված (ստացված):

1.7 2026 թվականի փետրվարի 20-ին գործի քննության տեղի և ժամանակի մասին պատշաճ ծանուցված Աշոտ Սաժումյանի բացակայությամբ տեղի է ունեցել վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննություն (հիմք՝ [redacted] փոստային հետադարձ ծանուցման առաքանին):

II. Վարույթի մասնակցի ներկայացրած դիրքորոշումները ու պարզաբանումները

Վարույթի ընթացքում Աշոտ Սաժումյանի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:

III. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները

Հանձնաժողովն ուսումնասիրել է ՎԻՎ/9/2026 գործում առկա նյութերը, կատարել հանգամանքների քննություն, որի արդյունքում հաստատված է համարում.

3.1 Արդարադատության նախարարության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի էլեկտրոնային միասնական գրանցամատյանում առկա տվյալների համաձայն՝ Աշոտ Սաժումյանը 2020 թվականի հունիսի 2-ից հանդիսանում է «Ժառանգություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ:

3.2 Վարույթի ընթացքում՝ 2026 թվականի հունվարի 14-ին, Հանձնաժողովում ստացվել է «Ժառանգություն» կուսակցության նախագահ Անդրանիկ Գրիգորյանի հաղորդագրությունը, որին կից ներկայացվել է «Ժառանգություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Աշոտ Սաժումյանի 2021 թվականի մայիսի 5-ի դիմումը, որով վերջինս հայտնել է, որ դադարեցնում է «Ժառանգություն» կուսակցությունում իր անդամակցությունը և վարչության անդամի լիազորությունները: Բացի այդ, 2026 թվականի փետրվարի 16-ին «Ժառանգություն» կուսակցության նախագահ Անդրանիկ Գրիգորյանի կողմից Հանձնաժողովին էլեկտրոնային փոստով ուղարկվել է գրություն, որով վերջինս հայտնել է, որ հաստատում է, որ Աշոտ Ռիչարդի Սաժումյանը դեռևս 2021 թվականի մայիս ամսից իր դիմումի համաձայն դուրս է եկել «Ժառանգություն» կուսակցության շարքերից և դադարեցրել է իր՝ վարչության անդամի լիազորությունները:

3.3 Աշոտ Սաժումյանի կողմից Հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետը լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չի ներկայացվել Հանձնաժողով:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը և հիմնավորումները

4.1 «Կուսակցությունների մասին» 2021 թվականի խմբագրության սահմանադրական օրենքի 28.1-ին հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները պարտավոր են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով ներկայացնել իրենց գույքի և եկամուտների հայտարարագիր (...):

4.2 Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձինք ներկայացնում են պաշտոնը ստանձնելու, դադարեցնելու, ինչպես նաև **տարեկան հայտարարագրեր:**

4.3 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց հայտարարագրերը ներկայացնելու կարգի նկատմամբ կիրառելի են «Հանրային ծառայության մասին» և «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքների համապատասխան նորմերը, (...):

4.4 Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտարարատու պաշտոնատար անձինք պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու հայտարարագրերը պաշտոնեական պարտականություններն ստանձնելու, դադարեցնելու օրերին հաջորդող 30 օրվա ընթացքում ներկայացնում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով:

4.5 Օրենսգրքի 169.28 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Հանրային ծառայության մասին» և «Կուսակցությունների մասին» օրենքներով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից (սույն հոդվածում այսուհետ՝ հայտարարատուներ) «Հանրային ծառայության մասին» օրենքով նախատեսված հայտարարագրերը (սույն հոդվածում այսուհետ՝ հայտարարագրեր) «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկի չափով:

4.6 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.7 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ հաշվի առնելով սույն օրենքով սահմանված առանձնահատկությունները:

4.8 Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հանձնաժողովը Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

4.9 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:

4.10 Օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պաշտոնատար անձինք ենթակա են վարչական պատասխանատվության այնպիսի վարչական իրավախախտումների համար, որոնք կապված են պետության անվտանգության ապահովման, կառավարման կարգի, պետական ու հասարակական կարգի, բնության, բնակչության առողջության պահպանության ոլորտում սահմանված կանոնները և մյուս այն կանոնները չպահպանելու հետ, որոնց կատարման ապահովումը մտնում է նրանց պաշտոնեական պարտականությունների մեջ: Սույն օրենսգրքի իմաստով՝ կուսակցության պաշտոնատար անձ է համարվում կուսակցության կանոնադրության կամ այլ փաստաթղթերի հիմքով՝ սույն օրենսգրքով պատասխանատվություն առաջացնող գործողությունների (անգործության) համար պատասխանատու կուսակցության ղեկավար

մարմնի անդամը կամ կուսակցության՝ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող պատասխանատու անդամը կամ աշխատողը:

4.11 Օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.12 Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.13 Օրենսգրքի 267-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտման վերաբերյալ գործը քննվում է վարչական պատասխանատվության ենթարկվող անձի ներկայությամբ: Գործը կարող է այդ անձի բացակայությամբ քննվել միայն այն դեպքերում, երբ տվյալներ կան գործի քննության տեղի և ժամանակի մասին նրան ժամանակին ծանուցելու վերաբերյալ և եթե նրանից միջնորդություն չի ստացվել գործի քննությունը հետաձգելու մասին:

4.14 Օրենսգրքի 282-րդ հոդվածի համաձայն՝ քննելով վարչական իրավախախտման վերաբերյալ գործը, մարմինը (պաշտոնատար անձը) ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝ 1) վարչական տույժ նշանակելու մասին, 2) գործի վարույթը կարճելու մասին:

Սույն գործով հաստատված փաստական հանգամանքների նկատմամբ կիրառելի իրավական նորմերի վերլուծության արդյունքում Հանձնաժողովն արձանագրում է. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *<u>վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման</u>* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված է համարում, որ սույն վարույթով իրավախախտման դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

Վարույթի ընթացքում պարզվել է, որ Աշոտ Սաժումյանը 2021 թվականի մայիսի 5-ին ներկայացրել է գրավոր դիմում, որով հայտնել է, որ դադարեցնում է իր անդամակցությունը և վարչության անդամի լիազորությունները «Ժառանգություն» կուսակցությունում՝ այդպիսով փաստացի դադարեցնելով իր՝ որպես Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնում անդամությունը: Թեև Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամների փոփոխության պետական գրանցման համար դիմում չի ներկայացվել Գործակալություն, ինչի արդյունքում հաշվառման տեսանկյունից պահպանվել է հայտարարատու պաշտոնատար անձի կարգավիճակը, սակայն այդ հանգամանքն ինքնին չի կարող դիտվել որպես բավարար հիմք վարչական պատասխանատվություն կիրառելու համար: Քանի որ Աշոտ Սաժումյանի կողմից իրականացվել են անհրաժեշտ գործողություններ Կուսակցության կանոնադրությամբ ամրագրված Կուսակցության անդամությունը դադարեցնելու կարգին համապատասխան, որի 3.2 կետի համաձայն (…) կուսակցության անդամակցության դադարեցումը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ վարչության՝ տվյալ անդամի կուսակցության անդամակցության դադարեցման վերաբերյալ որոշման հիման վրա: Նույն կանոնադրության «ժ» կետի համաձայն՝ կուսակցության անդամն իրավունք ունի իր դիմումի համաձայն անարգել կերպով դուրս գալու կուսակցության շարքերից: Բացի այդ, Աշոտ Սաժումյանի «Ժառանգություն» կուսակցության անդամակցությունը դադարեցնելու հանգամանքը հաստատվել է նաև «Ժառանգություն» կուսակցության նախագահ Անդրանիկ Գրիգորյանի կողմից Հանձնաժողովին ուղարկված գրությամբ:

Այսպիսով, հաշվի առնելով այն, որ Աշոտ Սաժումյանի որպես Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի լիազորությունները իր դիմումի համաձայն՝ 2021 թվականի մայիսի 5-ին դադարել են, Հանձնաժողովը գտնում է, որ Աշոտ Սաժումյանը չի կրում 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը ներկայացնելու պարտականություն, որի արդյունքում վարչական իրավախախտման դեպքը բացակայում է, ուստի ՎԻՎ/9/2026 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը ենթակա է կարճման՝ Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված վարչական իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, նույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Օրենսգրքի 282-րդ հոդվածի 2-րդ կետով և Օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ժառանգություն» կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամ Աշոտ Ռիչարդի Սաժումյանի կողմից Կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամի, իսկ այլ ղեկավար մարմնի դեպքում այդ մարմնի անդամի՝ 2023 թվականի գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիրը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված ժամկետները լրանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում, Հանձնաժողովի գրավոր ծանուցման հիման վրա չներկայացնելու համար Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարչական իրավախախտման վերաբերյալ ՎԻՎ/9/2026 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աշոտ Ռիչարդի Սաժումյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝

ՄԱՐԻԱՄ ԳԱԼՍՏՅԱՆ